# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

Ն 232 – Ա 03 մայիսի 2021 թ.

## ՄԱՆՈՒՇ ՏՈՆԵՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ Ն 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի Ն 1392-Ն որոշմամբ հաստատված Ն3 հավելվածի 69-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի Ն 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները և Մանուշ Տոնեյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. 2021 թվականի մայիսի 3-ից, մինչև սահմանված կարգով դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և տնօրենի ընտրվելը, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ն 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Մանուշ Տոնեյանին՝ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

03.05.2021

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ